

Կազմված է 06.06.2019 թ.
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ N 1

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ս Է

«ՀԵՐԱՑԻ» ԱՐՀԵՍԱԿՑԱԿԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Համաժողովի արտահերթ նիստի

06.06.2019 թ. որոշմամբ

(արձանագրություն N° 2)

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ս Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻ
ԿՈՂՄԻՑ 18.05.2015 թ.

Գրանցման թիվ՝ 211.190.857709
Հարկ վճարողի հաշվի համար՝ 02638203
18.05.2015 թ. գրանցված կանոնադրության
թիվ 1-2 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
նեգիստրի գործակալության կողմից

« 31 » 07 2019 թ.

Նախագահ



(Մ. Սիմոնյան)

[Handwritten signature]



« Հ Ե Ր Ա Ց Ի »

ԱՐՀԵՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հերացի» արհեստակցական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողների աշխատանքային ու դրա հետ կապված մասնագիտական, տնտեսական, սոցիալական իրավունքներն ու շահերը ներկայացնելու և աշխատանքային հարաբերություններում դրանք պաշտպանելու նպատակով հիմնադրած հասարակական միավորում է:

1.2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:

1.3. Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում՝ լուծարման ավարտի (լուծարման պետական գրանցման) պահից:

1.4. Կազմակերպությունն անկախ է պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, գործատուներից, այլ կազմակերպություններից և կուսակցություններից, հաշվետու չէ և զերծ է վերջիններիս վերահսկողությունից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

1.5. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև սույն կանոնադրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել այլ արհեստակցական կազմակերպությունների, միությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային արհեստակցական միությունների և հասարակական միավորումների հետ:

1.6. Կազմակերպությունը կարող է ունենալ իր անվանումը պարունակող դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ և օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ խորհրդանշաններ, իր անվանումով (հայերեն, անգլերեն և ռուսերեն գրառումներով) կլոր կնիք, բանկերում բացել հաշիվներ:

1.7. Կազմակերպության և Համալսարանի միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, կոլեկտիվ պայմանագրով:

1.8. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Հերացի» Արհեստակցական Կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ «Հերացի» ԱՐՀԿ

անգլերեն լրիվ՝ “Heratsi” Trade Organization

անգլերեն կրճատ՝ “Heratsi” TO

ռուսերեն լրիվ՝ Профессиональная Организация “Гераци”

ռուսերեն կրճատ՝ ПО “Гераци”

1.9. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0025, Կորյունի 2 շ.:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Կազմակերպության գործունեության նպատակներն են՝

- ա) Ներկայացնել և պաշտպանել իր անդամների աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական և այլ շահերն ու իրավունքները՝ Համալսարանի կամ երրորդ անձանց մոտ,
- բ) Համալսարանին ներկայացնել աշխատողների աշխատանքի և հանգստի պայմանների բարելավման, նոր տեխնիկայի ներդրման, արտադրական նորմաների վերանայման, աշխատանքի վարձատրության չափի և կարգի հարցերը,
- գ) Կազմակերպության մասնակցի (անդամի) պարգևատրման (ֆինանսական աջակցության) և խրախուսման հարցերում համագործակցել Համալսարանի հետ,
- դ) Համալսարանի հրավերով մասնակցել արտադրական ծրագրերի մշակմանը և դրանց կենսագործմանը,
- ե) Համալսարանի ներկայացմամբ քննարկել աշխատանքային կարգապահության խախտում թույլ տված Կազմակերպության մասնակցի (անդամի) հարցը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Կազմակերպությունն իրավունք ունի.

- ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտականություններ,
- բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտպանել աշխատանքային օրենսդրության, աշխատանքի պաշտպանության կանոնները,
- գ) Կազմակերպել աշխատողների հանգիստը (այդ թվում առողջարարական) և ապահովել զբոսաշրջիկության և մարզական միջոցառումների իրականացումը,
- դ) աշխատանքից դուրս կազմակերպել այլ հանրօգուտ աշխատանքներ, փառատոներ, մրցույթներ,
- ե) իրականացնել դիտարկումներ աշխատողների աշխատանքի պայմանների, անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման նկատմամբ,
- զ) աշխատողների իրավունքների, աշխատանքի պայմանների հետ կապված հարցերում Համալսարանին ներկայացնել միջնորդագրեր, եզրակացություններ,
- է) անհրաժեշտության դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել միջոցառումներ, վարել բանակցություններ,
- ը) լուսաբանել, հրապարակել իր գործունեությանը վերաբերող տեղեկություններ,
- թ) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ իրավունքներ:

3.2. Կազմակերպությունն իր կանոնադրական խնդիրները իրագործելու նպատակով իրավունք ունի Համալսարանից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից ստանալու ՀՀ օրենսդրությամբ չարգելված ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք չհամարվող տեղեկություններ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

4.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Կազմակերպության անդամը՝ կամավորության սկզբունքով, կարող է լինել Համալսարանի յուրաքանչյուր աշխատող, ով ընդունում է սույն կանոնադրությունը, ճանաչում և իրականացնում է նրա պա-

հանջները, կանոնադրությամբ սահմանված չափով և ժամկետում մուծում է մուտքի վճարը և անդամավճարը:

Արհեստակցական կազմակերպության մասնակից չեն կարող լինել ՀՀ զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողները, ինչպես նաև դատավորները և Սահմանադրական դատարանի դատավորները:

4.2. Կազմակերպության անդամակցելը և անդամակցությունից դուրս գալը կամավոր է:

4.3. Աշխատողը համարվում է Կազմակերպության անդամ Կազմակերպության նախագահի անունով իր դիմումը ներկայացնելու պահից:

4.4. Կազմակերպության անդամին կարող է տրվել անդամատոմս:

4.5. Կազմակերպության անդամը կարող է հրաժարվել անդամակցությունից՝ համապատասխան դիմում ներկայացնելով Կազմակերպության նախագահին:

4.6. Կազմակերպության նախագահին դիմում ներկայացնելու պահից Կազմակերպության անդամի անդամությունը համարվում է դադարած:

4.7. Կազմակերպության անդամը՝ օրենսդրության և/կամ սույն կանոնադրության պահանջները խախտելու դեպքում Գործադիր կոմիտեի որոշմամբ կարող է հեռացվել Կազմակերպությունից:

4.8. Կազմակերպության անդամն իրավունք ունի.

- 1) Ընտրվել գործադիր կոմիտեի և վերստուգիչ մարմնի կազմերում,
- 2) Գործադիր կոմիտեի քննարկմանը ներկայացնել փաստաթղթերի նախագծեր, առաջարկություններ, ստանալ դրանց վերաբերյալ որոշումներ,
- 3) Դիմել գործադիր կոմիտեին իր աշխատանքային և սոցիալ-տնտեսական շահերի պաշտպանության միջնորդությամբ,
- 4) Մասնակցել կոլեկտիվ պայմանագրի և համաձայնագրի նախագծերի նախապատրաստման և իրականացման աշխատանքներին,
- 5) Մասնակցել գործադիր կոմիտեի գործունեության ծրագրերի մշակմանը,
- 6) Ստանալ տեղեկատվություն Գործադիր կոմիտեից Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության մասին:

4.9. Կազմակերպության անդամը պարտավոր է.

- 1) Կատարել սույն կանոնադրության պահանջները, գործադիր կոմիտեի որոշումները,
- 2) Սահմանված չափով և ժամկետում մուծել անդամավճարը և մուտքի վճարը,
- 3) Ցուցաբերել փոխադարձ համերաշխություն Կազմակերպության անդամների միջև աշխատանքային և սոցիալ-տնտեսական իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված Կազմակերպության միջոցառումների, այլ աշխատանքների ժամանակ:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

5.1. Կազմակերպության կառավարման մարմիններն են՝

- 1) Համաժողովը,
- 2) Գործադիր կոմիտեն,

3) Նախագահը:

5.2. Կազմակերպության ներսում կարող են ստեղծվել հանձնաժողովներ:

5.3. Կառավարման բոլոր մարմինների նիստերին իրավունք ունի մասնակցելու գործատուի ներկայացուցիչը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

5.4. Գործատուն չի կարող ընտրվել Կազմակերպության ղեկավար մարմինների կազմում:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

6.1. Համաժողովը Կազմակերպության բարձրագույն մարմինն է, որի նիստերը հրավիրվում են Կազմակերպության անդամների կամ Ներկայացուցիչների միջոցով:

6.2. Ներկայացուցիչներ ընտրելու ընթացակարգը և համամասնությունները սահմանվում են Գործադիր կոմիտեի կողմից ընդունված կանոնակարգի համաձայն:

6.3. Կազմակերպության անդամներից ընտրվում են նվազագույնը 30 (երեսուն) ներկայացուցիչներ:

6.4. Ներկայացուցչի լիազորությունները կարող են դադարեցվել հետևյալ դեպքերում.

1) ներկայացուցչի մահվան կամ դատարանի որոշմամբ անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում,

2) սեփական դիմումի համաձայն,

3) Կազմակերպության անդամությունը դադարեցնելու դեպքում,

4) Կազմակերպության անդամների 1/4-ի դիմումի հիման վրա:

6.5. Ներկայացուցչի լիազորությունները դադարեցվելու դեպքում նոր ներկայացուցիչ չի ընտրվում, եթե ներկայացուցիչների ընդհանուր թիվը չի նվազել 25-ից (քսանհինգից): Ներկայացուցիչների ընդհանուր թիվը 25-ից պակաս դառնալու օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում հեռակա կարգով հրավիրվում է Համաժողովի արտահերթ նիստ՝ Ներկայացուցիչների թվաքանակն ամբողջությամբ վերականգնելու նպատակով:

6.6. Համաժողովը Կազմակերպության բարձրագույն մարմինն է, որի հերթական նիստերը հրավիրվում են 5 (հինգ) տարին մեկ անգամ:

6.7. Արտահերթ նիստ հրավիրելու իրավունք ունեն Կազմակերպության նախագահը, Գործադիր կոմիտեի անդամների, վերստուգիչ մարմնի անդամների, Կազմակերպության անդամների կամ Ներկայացուցիչների առնվազն 1/3-ը (մեկ երրորդը):

6.8. Համաժողովի նիստի (այդ թվում՝ արտահերթ) հրավիրման ժամկետի և օրակարգի մասին Համաժողովի անդամները կամ Ներկայացուցիչները տեղեկացվում են Նախագահի կողմից՝ հրավիրման օրվանից առնվազն 7 (յոթ) օր առաջ:

6.9. Համաժողովի նիստերն իրավազոր են (քվորումն ապահովված է), եթե դրանց մասնակցում են Կազմակերպության անդամների ընդհանուր թվի 1/4-ը (մեկ չորրորդը), կամ Ներկայացուցիչների ընդհանուր թվի 1/2-ը (մեկ երկրորդը):

6.10. Համաժողովի նիստերը կարող են իրականացվել նաև հեռակա եղանակով:

Հեռակա կարգով Համաժողովի նիստը անցկացվում է քվեաթերթիկների միջոցով:

Համաժողովի քարտուղարը Նախագահի անունից Կազմակերպության կամ Ներկայացուցիչներին էլեկտրոնային կամ ֆաքսի միջոցով ուղարկում է Համաժողովի օրակարգը, ինչպես նաև քվեաթերթիկները հետևյալ նվազագույն վավերապայմաններով.

- 1) Կազմակերպության անվանումը,
- 2) Նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը,
- 3) Քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը և նրա քննարկման հերթականությունը,
- 4) Քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակը՝ «կողմ», «դեմ» և «ձեռնպահ»:

Կազմակերպության անդամները (կամ Ներկայացուցիչները), ստանալով ուղարկված փաստաթղթերը, քվեաթերթիկների միջոցով քվեարկում են օրակարգի հարցերի վերաբերյալ և էլեկտրոնային կամ այլ եղանակով այն ուղարկում Համաժողովի քարտուղարին: Քվեաթերթիկները համարվում են վավեր, եթե դրանցում թողնվել է քվեարկության մեկ տարբերակ և ուղարկվել քվեաթերթիկում նշված ժամկետում:

Համաժողովի քվորումն ապահովված լինելու դեպքում (Կազմակերպության անդամների առնվազն 1/4 -ի կամ Ներկայացուցիչների առնվազն 1/2-ի կողմից քվեաթերթիկները լրացվելու և քվեաթերթիկում նշված ժամկետում ուղարկվելու դեպքում) Համաժողովի քարտուղարն ամփոփում է ստացված քվեաթերթիկները (հաշվառում է ձայները) և դրանց հիման վրա կազմում է հեռակա կարգով անցկացրած նիստի արձանագրություն, որին կցվում են քվեաթերթիկները:

Հեռակա կարգով անցկացված Համաժողովի նիստի արձանագրությունը ստորագրվում է Համաժողովի քարտուղարի և Նախագահի կողմից:

Հեռակա կարգով անցկացված Համաժողովի նիստի արձանագրությունը՝ քվեաթերթիկների հետ միասին պահվում է Կազմակերպությունում, իսկ արձանագրության օրինակը հրապարակվում է Կազմակերպության կայք էջում՝

http://ysmu.am/hy/page_list/heraci_arhestakcakan_kazmakerputyun/#sthash.WqU69BRt.dpbs:

6.11. Համաժողովի նիստում որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Համաժողովի նիստում որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, եթե փակ քվեարկություն անցկացնելու մասին Համաժողովը որոշում չի կայացնում:

6.12. Համաժողովն ունի Կազմակերպության գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

6.13. Համաժողովի բացառիկ իրավասությունն է.

- 1) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության նոր խմբագրությամբ հաստատումը,
- 2) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,
- 3) Նախագահի ընտրությունը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- 4) Ներկայացուցիչներին իր լիազորությունների պատվիրակումը,

5) Գործադիր կոմիտեի և Վերստուգիչ մարմնի կազմի ձևավորումը, նրանց անդամների քանակական կազմերի հաստատումը,

6) Գործադիր կոմիտեի և Վերստուգիչ մարմնի անդամների ընտրությունը (ներառյալ՝ վերստուգիչ մարմնի ղեկավարի) և նրանց լիազորությունների դադարեցումը, բացառությամբ Գործադիր կոմիտեի իրավասությանը վերաբերող հարցերի,

7) Համաժողովի քարտուղարի ընտրությունը՝ Նախագահի լիազորությունների ժամկետով,

8) Նախագահի հաշվետվությունների գնահատումը,

9) Վերստուգիչ մարմնի հաշվետվության արդյունքների ամփոփումը,

10) ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆ

7.1. Համաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում Կազմակերպության աշխատանքներն իրականացնում է Գործադիր կոմիտեն:

7.2. Գործադիր կոմիտեի լիազորությունների ժամկետը 5 (հինգ) տարի է:

7.3. Գործադիր կոմիտեն՝

1) ղեկավարում է Կազմակերպության աշխատանքները Համաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում,

2) իրագործում է Համաժողովի որոշումները, սույն կանոնադրության պահանջները,

3) օրենքով սահմանված կարգով կազմակերպում է միջոցառումներ,

4) ընդունում է կանոնակարգեր, կարգեր,

5) հաստատում է Կազմակերպության բյուջեն,

6) քննարկում է ֆինանսական ստուգումների արդյունքները,

7) ընտրում է Կազմակերպության նախագահի տեղակալին, գործադիր կոմիտեի քարտուղարին՝ նախագահի լիազորությունների ժամկետով, դադարեցնում է նրանց լիազորությունները,

8) ստեղծում է հանձնաժողովներ, կատարում է աշխատանքի բաժանում Գործադիր կոմիտեի անդամների միջև,

9) լսում է նախագահի գործունեության հաշվետվությունները.

10) որոշում է Կազմակերպության հաստիքացուցակը (աշխատատեղերի թվաքանակը և աշխատավարձի չափը).

11) սահմանում է անդամավճարի չափը և վճարման կարգը:

7.4. Գործադիր կոմիտեի նիստը իրավիրվում է առնվազն 6 (վեց) ամիսը մեկ անգամ և իրավագոր է, եթե դրան մասնակցում են Գործադիր կոմիտեի անդամների ոչ պակաս քան **2/3 (երկու երրորդը)**:

7.5. Գործադիր կոմիտեի որոշումները համարվում են ընդունված նիստին ներկա մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

Գործադիր կոմիտեի նիստում որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, եթե փակ քվեարկություն անցկացնելու մասին Գործադիր կոմիտեն որոշում չի կայացնում:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ (ՆԱԽԱԳԱՀԸ)

8.1. Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը՝ նախագահը (այսուհետ՝ Նախագահ) ընտրվում է Համաժողովի կողմից, մասնակիցների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ 5 (հինգ) տարի ժամկետով:

8.2. Նախագահը Համաժողովի որոշմամբ կարող է վերընտրվել:

8.3. Նախագահին ի պաշտոնե Գործադիր կոմիտեի ղեկավարն է:

8.4. Նախագահը՝

1) Ապահովում է Համաժողովի և Գործադիր կոմիտեի որոշումների կատարումը,
2) նախագահում է Համաժողովի և Գործադիր կոմիտեի նիստերը,
3) Համալսարանի հետ փոխհարաբերություններում ներկայացնում և պաշտպանում է Կազմակերպության և նրա անդամների շահերը,

4) ներկայացնում է աշխատողների շահերը պետական մարմիններում և այլ կազմակերպություններում,

5) Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի,

6) Կազմակերպության անունից՝ որոշակի գործողություններ կատարելու նպատակի, տալիս է լիազորագրեր,

7) Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքային պայմանագրեր է կնքում, աշխատանքի ընդունում, ինչպես նաև աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատողներին,

8) Կազմակերպության անունից կնքում է գործարքներ,

9) տնօրինում է Կազմակերպության գույքն ու ֆինանսական միջոցները,

10) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ,

11) Իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

8.5. Նախագահի բացակայության դեպքում, վերջինիս լիազորություններն իրականացնում է տեղակալը կամ Նախագահի հանձնարարությամբ այլ անձ:

9. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՄԱՐՄԻՆԸ.

9.1. Կազմակերպության Վերստուգիչ մարմինը մշտապես գործող մարմին է, որը ձևավորվում է Համաժողովի կողմից:

9.2. Վերստուգիչ մարմնի քանակական կազմը բաղկացած է՝ նվազագույնը 3 (երեք) անդամից՝ վերստուգիչ մարմնի ղեկավարից և երկու անդամներից:

9.3. Վերստուգիչ մարմինը նիստերը գումարվում են առնվազն տարին մեկ անգամ:

9.4. Վերստուգիչ մարմնի լիազորությունների ժամկետը 5 (հինգ) տարի է:

9.5. Վերստուգիչ մարմնի որոշումները համարվում են ընդունված, եթե դրան կողմ է քվեարկել նիստին ներկա անդամների պարզ մեծամասնությունը:

Վերստուգիչ մարմնի նիստում որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, եթե փակ քվեարկություն անցկացնելու մասին Վերստուգիչ մարմինը որոշում չի կայացնում:

9.6. Վերստուգիչ մարմնի որոշումների ժամանակ, ձայների հավասարության դեպքում, վերահսկողության մարմնի ղեկավարի ձայնը կանխորոշիչ է:

9.7. Վերահսկողության մարմինը վերահսկողություն է իրականացնում Նախագահի, Գործադիր կոմիտեի և Կազմակերպության կառավարման գործընթացի, բյուջեի կատարման՝ այդ թվում ֆինանսական ու ընթացիկ գործունեության նկատմամբ, դրանց մասին առնվազն երկու տարին մեկ անգամ էլեկտրոնային կամ այլ եղանակով հաշվետվություն է ներկայացնում Համաժողովին կամ Ներկայացուցչական մարմնին:

10. ՆԱԽԱԳԱՀԻ, ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ, ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՄԱՐՄՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌՁԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ

10.1. Նախագահի, Վերստուգիչ մարմնի, Գործադիր կոմիտեի թեկնածուներ ինքնառաջադրվում են հետևյալ կարգով.

Նախագահի պաշտոնում ընտրվելու համար թեկնածություններ կարող են ինքնառաջադրվել նախագահի լիազորությունների ժամկետի ավարտից 40 օր առաջ՝ մեկ շաբաթյա ժամկետում Կազմակերպության անունով դիմում ներկայացնելով Կազմակերպության հասցեով կամ Կազմակերպության էլեկտրոնային հասցեին:

Վերստուգիչ մարմնի և Գործադիր կոմիտեի անդամների թեկնածություններ կարող են ինքնառաջադրվել նախագահի լիազորությունների ժամկետի ավարտից 40 օր առաջ՝ երկշաբաթյա ժամկետում Կազմակերպության անունով դիմում ներկայացնելով Կազմակերպության սենյակ կամ Կազմակերպության էլեկտրոնային հասցեին:

Դիմումում պետք է նշվեն թեկնածուի անուն ազգանունը, Նախագահի, Վերստուգիչ մարմնի, Գործադիր կոմիտեի թեկնածու լինելու ցանկությունը հավաստող փաստը, ամիս, ամսաթիվը՝ հավաստված ստորագրությամբ:

Դիմում ներկայացրած բոլոր թեկնածուները հրավիրվում են Համաժողովի նիստին, Նախագահի կողմից՝ նիստի հրավիրման օրվանից առնվազն 7 (յոթ) օր առաջ:

Թեկնածուներ կարող են ինքնառաջադրվել նաև Համաժողովի նիստի ընթացքում:

Թեկնածուների ընտրությունը կատարվում է տվյալ մարմնի համապատասխան թվակազմին համաձայն՝ քվեարկության արդյունքներով առավելագույն ձայներ ստացած թեկնածուների թվից:

11. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ, ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ, ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՄԱՐՄՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Կազմակերպության Համաժողովի, Գործադիր կոմիտեի, Վերստուգիչ մարմնի նիստերը արձանագրվում են:

11.2. Կազմակերպության Համաժողովի, Գործադիր կոմիտեի, Վերստուգիչ մարմնի նիստերի արձանագրությունում նշվում են.

- 1) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
- 2) նիստին ներկա և բացակա անձանց շրջանակը,
- 3) նիստի օրակարգը,
- 4) քվեարկության դրված հարցերը և դրանց քվեարկության արդյունքները,
- 5) ընդունված որոշումները:

11.3. Կազմակերպության Համաժողովի նիստերի արձանագրությունները ստորագրվում են նիստի նախագահի և արձանագրող քարտուղարի կողմից, իսկ Ներկայացուցչական մարմնի միջոցով Համաժողովի նիստ հրավիրելու դեպքում՝ նիստին ներկա բոլոր անդամների կողմից:

11.4. Կազմակերպության Գործադիր կոմիտեի և Վերստուգիչ մարմնի նիստերի արձանագրությունները ստորագրվում են նիստին ներկա բոլոր անդամների կողմից:

11.5. Կազմակերպության նիստերի արձանագրությունները պահպանվում են Կազմակերպության գտնվելու վայրում:

12. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ.

12.1 Կազմակերպության սեփականությունը գոյանում է մուտքի վճարներից, անդամավճարներից, կամավոր ներդրումներից, նվիրատվություններից, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

12.2 Կազմակերպության անդամության մուտքի վճարի չափը սահմանվում է 100 ՀՀ դրամի չափով:

12.3 Անդամավճարի գանձումը կատարվում է գործատուի հետ համաձայնեցված կարգով՝ աշխատողների աշխատավարձից 0,5 տոկոս փոխանցելով Կազմակերպության բանկային հաշվին:

12.4 Կազմակերպությունն իր սեփականության միջոցներից ծախսեր է կատարում աշխատողների նյութական օգնության, խրախուսման, միջոցառումների իրականացման, աշխատողներին աշխատավարձ վճարելու, ինչպես նաև Համաժողովի, Ներկայացուցչական մարմնի ու Գործադիր կոմիտեի որոշմամբ այլ ծախսեր կատարելու նպատակով:

12.5 Գործադիր կոմիտեի նախագահը յուրաքանչյուր օրացուցային տարվա ավարտից հետո՝ 6 (վեց) ամսվա ընթացքում Կազմակերպության սեփականության օգտագործման հաշվետվությունը, Վերստուգիչ մարմնի ստուգումների ակտի հետ միասին, դեպոնացնում է Գործադիր մարմնում: Վերոնշյալ փաստաթղթերին ցանկության դեպքում կարող է ծանոթանալ Համաժողովի ցանկացած անդամ, այդ մասին դիմում ներկայացնելու օրվանից 3-օրյա ժամկետում (ցանկության դեպքում կարող է ստանալ նաև պատճեն):

13. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ.

13.1. Կազմակերպության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը) իրականացվում է Համաժողովի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

13.2. Կազմակերպության լուծարումը տեղի է ունենում Համաժողովի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով: